ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԱՐԵԿ ԱՐՇԱԿԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ՂԱԶԱԽՍՏԱՆ.ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՈՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

**Է. 00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր **Ա. Ա. Ստեփանյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ ք.գ.դ. պրոֆեսոր **Մ.Մ. Մարգարյան**
պ.գ.թ. պրոֆեսոր **Ա. Սաֆարյան**

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հունիսի 5-ին ժամը 15^{00} -ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. մայիսի 3-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար **պ.գ.թ. Մ.Հ. Ղահրիյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Խորհրդային Միության փլուզումով վերջ դրվեց աշխարհի վերջին բազմազգ կայսրությանը, որն ըստ քաղաքագետ Ֆ. Ֆուկույամայի կարծիքի՝ ազդարարեց «պատմության ավարտի» մասին[1]: Սակայն այդ ավարտը իր անորոշություններով և մարտահրավերներով պարունակում էր նաև նոր սկզբի հնարավորություններ: Կարևոր էր պատմական պահը. այդ մարտահարվերները նախանշում էին հետխորհրդային երկրների կերպափոխման ուղին: Ինչպես ցույց տվեց պատմությունը՝ դա ինքնընթաց գործընթաց չէր. իշխանությունը դարձավ նոր ընտրախավերի մերթ հավասարակշիռ և շրջահայաց, մերթ արկածախնդիր և ուժային ոգորումների առարկա: Այլապես՝ գործ ունենք անցումային հասարակությունների համայնապատկերի հետ, որպիսիք եղել են, կան և կլինեն պատմության հոլովույթում: Հարկավ, յուրաքանչյուր պարագայում՝ իրենց ընդհանրություններով և առանձնահատկություններով:

Հետխորհրդային տարածքում պետականաշինության գործընթացներն ընթացան մի քանի տարբերակներով՝ **ա.** արևմտյան-բալթյան՝ Լատվիա, Լիտվա Էստոնիա, **բ.** սլավոնական՝ Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս, **գ.** այսրկովկասյան՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, **դ.** Կենտրոնասիական՝ Ղազախստան, Տաջիկստան, Ղրղզստան, Ուզբեկստան և Թուրքմենստան:

Հետխորհրդային փոխակերպումներն առավել հակասական ընթացք ստացան հատկապես Կենտրոնական Ասիայի երկրներում՝ Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան, Տաջիկստան և Թուրքմենստան: Տարածաշրջանը ԽՍՀՄ փլուզումից ի վեր կանգնած է մարտահրավերներին հարիր պատասխաններ մշակելու խնդրականի առաջ: Պատասխաններ, որոնք պետք է ճանապարհ հարթեին նրանց արդիականացման համար: Տարածաշրջանի հինգ երկրների անկախության հռչակումն ընթացավ առանց «ազգային անկախության և այլախոհական շարժումների»[2]: Այդուամենայնիվ, երկրները չշրջանցեցին անցումային ցնցումները : Արյունալի քաղաքացիական պատերազմի միջով անցավ Տաջիկստանը: Ներքին խիստ լարված իրադրություն էր Ուզբեկստանում՝ պայմանավորված քաղաքական և ծայրահեղական իսլամի դրսևորումներով: Արմատական իսլամի զսպման անհրաժեշտությունը ակնհայտ էր նաև Թուրքմենստանում: Իրադրությունն այլ էր Ղրղզստանում և Ղազախստանում: Այս երկրները աչքի էին ընկնում միջազգային համակարգին ինտեգրվելու իրենց պատրաստակամությամբ: Ուշագրավ է նաև նրանց պետականաշինական փորձառությունը: Ղրղզստանն իր խիստ սահմանափակ բնական ռեսուրսներով փորձում էր առանձնանալ ժողովրդավարության ներդրման հանձնառությամբ: Չնայած ներքին բախումներին, այն շարունակում է ընթանալ իր ընտրած ուղիով

---

[1] **Fukuyama F.,** End of History and the Last Man, New York: Simon and Schuster, 2006.

[2] **Olcott M. B.,** Catapult to Independence, Foreign Affairs, Vol. 71, No. 3, 1992, pp. 108-113.

և միջազգային քաղաքագիտական խոսույթում ներկայանում է իբրև «ժողովրդավարության կղզի»[3]:

Մեր ատենախոսության հիմնական նպատակը Կենտրոնական Ասիայի առանցքային երկրի՝ Ղազախստանի հետխորհրդային արդիականացման ուսումնասիրությունն է: Գործընթաց, որի կարևորագույն չափումներն են՝ պետականակենտրոնությունը և ազգային ինքնության նոր հարացույցի մշակումը:

Պատմականորեն ղազախների (ինչպես տարածաշրջանի մյուս ժողովուրդների) ինքնությունը խարսխված է եղել կլանային համակարգի և իսլամի արժեհամակարգի վրա[4]: Խորհրդային վարչակարգը կարևոր քայլեր ձեռնարկեց այս համակարգը հաղթահարելու ուղղությամբ: Արդյունքները տպավորիչ էին՝ զարգացած արդյունաբերություն, գյուղատնտեսություն, կրթական համակարգ, առողջապահություն և այլն: Սակայն ղազախական ազգային իդեալը շարունակում էր շաղկապված մնալ կլանային անցյալի արժեքներին և հերոսներին: Այն պետք է ելակետային նշանակություն ստանար հետխորհրդային ինքնակայացման հոլովույթում: 1991 թվականի դեկտեմբերի 16-ին Ղազախստանը հռչակեց իր անկախությունը: Այն վերջինն էր խորհրդային հանրապետություններից: Նախկին կուսակցական աստիճանակարգի ղեկավար Նուրսուլթան Նազարբաևը դարձավ նորանկախ Ղազախստանի առաջին նախագահը: Խոսքը քարիզմատիկ իշխանության մասին էր, որը, արդի քաղաքագիտական եզրաբանությամբ, նպատակ ուներ ստեղծելու ղազախական նոր «կենսաշխարհը և համակարգը»: Նախագահին հաջողվեց ժողովրդին համախմբել այդ ապագայատեսական (ֆուտուրիստական) ծրագրի շուրջ: Եվ անձնիշխանությունը դարձավ նորօրյա ազգաշինության կարևոր լծակը: Այս գործընթացները զուգորդվում էին ներհանրութային տարակերպ նորարարություններով: Դրանք նախանշում էին նորօրյա ազգա-պետականաշինության մի յուրօրինակ հարացույց, որն անժխտելի կարևորություն ունի արդի համաշխարհային պատմության, աշխարհաքաղաքականության և քաղաքագիտության դիտանկյունից: Հենց դրանով էլ պայմանավորված է գիտաթեմայի արդիականությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ:

Ատենախոսության հիմնական **ժամանակային շրջանակն** ընդգրկում է Ղազախստանի պատմության նորագույն ժամանակահատվածը՝ սկսած ԽՍՀՄ փլուզումից ի վեր: Սակայն հետխորհրդային հասարակական մարտահրավերների համապարփակ պատկերը ներկայացնելու նպատակով ակնարկային քննության է ենթարկվել նաև երկրի խանական, ցարական և խորհրդային ժամանակաշրջանները:

---

[3] **Juraev Sh.,** Kyrgyz democracy? The Tulip Revolution and beyond in Cummings S., (ed.) Domestic and International Perspectives on Kyrgyzstan's 'Tulip Revolution': Motives, Mobilization and Meanings, Routledge, 2013, p. 32.

[4] **Golden P.B.,** Central Asia in World History, New York: Oxford University Press, 2011, p. 1.

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ: Ըստ նշված ժամանակագրական մոտեցման՝ որոշարկվել է **հետազոտության առարկան՝** ուսումնասիրել հետխորհրդային Ղազախստանի ազգա-պետականաշինության հիմնարար սկզբունքներն ու հարցույցերը: Շնորհիվ նման մոտեցման՝ հնարավոր է եղել համակարգային ուսումնասիրության ենթարկել ղազախական ինքնության հարացույցերի ժամանակային հերթագայությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության **նպատակն է՝** ուսումնասիրել նորարարական այն մեխանիզմները, որոնցով Ղազախստանի անձնիշխանական կառույցը ձեռնարկեց ազգա-պետականաշինության մի աննախընթաց գործընթաց: Տեղի ունեցավ խզում նախկին ինքնութենական հարացույցից. քաղաքակրթական ինքնանույնացման գործընթացն այլևս միջնորդավորվում էր ազգային և քաղաքացիական միջավայրերով, որոնց համադրվում էին նաև ավանդական արքետիպերը: Ըստ այդմ՝ աշխատանքում առաջ են քաշվել հետևյալ **հիմնախնդիրները.**

- ներկայացնել ղազախական հանրույթի պատմական մարտահրավերները և դրանց հարիր պատասխաններ մշակող ընտրախավի ապագայատեսական նախագծերը,
- դիտարկել, թե ինչպե՞ս է վարչակարգը փորձում երկար տևողության ժամանակային տիրույթում շրջանցել ավանդական ցեղային-կլանային հարաբերությունների մնացուկները,
- ուսումնասիրել հետխորհրդային ազգաշինության տարբեր շերտերը՝ ազգային-էթնիկական, քաղաքացիական, կրոնական, քաղաքական, աշխարհաքաղաքական, ապա դրանց համատեքստում քննարկել համաղազախստանյան ինքնության նոր տեսլականը,
- ցույց տալ ազգաշինության և ինքնութային գործընթացներից արմատական իսլամի ազդեցության բացառման ճիգերը,
- վերլուծել և գնահատել ազգային համակեցական նոր միջավայրերի ստեղծմանը միտված քաղաքակրթական ջանքերը՝ լեզվաքաղաքականություն, խորհրդանիշեր (ազգային դրոշ, գերբ, տոներ), կրթություն և գիտություն, էթնիկ-վարչական քաղաքականություն և այլն,
- համեմատական վերլուծության ենթարկել քաղաքաշինության և մասնավորապես նոր մայրաքաղաքի կառուցման քաղաքակրթական, աշխարհաքաղաքական և ինքնութենական շերտերը,
- ուսումնասիրել նոր մայրաքաղաքի՝ Աստանայի առանցքային դերը ազգաշինության նոր հարացույցի մշակման, գործարկման և զարգացման գործում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ատենախոսության հիմնախնդիրների գիտական լուսաբանման նպատակով կիրառելվել է հետազոտության որակական (qualitative) մեթոդաբանությունը՝ հիմնվելով պատմաքննական և պատմահամադրական վերլուծության սկզբունքի վրա: Կիրառվել են այնպիսի գիտակարգերի արդյունքներ, ինչպիսիք են մշակու-

թաբանությունը և ազգաբանությունը, քաղաքակրթագիտությունը և կրոնագիտությունը, աշխարհաքաղաքականությունը և քաղաքագիտությունը: Նման մոտեցումը կարևոր է՝ վեր հանելու պատմական գործընթացների բազմաշերտությունը:

Առաջ քաշված հիմնախնդիրների առավել ընդգրկուն վերլուծության նպատակով կատարվել է հետազոտական այց Աստանայի Նազարբաև և Լ. Գումիլևի անվան Եվրասիական ազգային համալսարաններ: Կատարվել է գրադարանային ուսումնասիրություն և անցկացվել է փորձագիտական հարցախույզ դասախոսների շրջանում, որի արդյունքներն օգտագործված են ատենախոսությունում:

Առաջադրվել են հետևյալ հետազոտական հարցադրումները.

- Ի՞նչ հանգամանքներ են ընկած Ղազախստանի՝ պետականազուրկ ցեղային միավորից դեպի անկախ պետական/ազգային կազմավորման անցման հիմքում:
- Ի՞նչ մեխանիզմներով է Ն. Նազարբաևի վարչակարգը ղազախական հասարակությանը պատրաստում ինքնանորագման:
- Ի՞նչ առնչություններ կան պատմության նորովի ընկալման, լեզվական, կրթական, էթնիկ և քաղաքաշինական նորացման նախաձեռնումների և ղազախական քաղաքակրթական ինքնության նոր հարացույցի մշակման միջև:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության հիմնադրույթները հնարավորություն կտան նոր հայացքով դիտարկելու հետխորհրդային պատմական տեղաշարժերը Կենտրոնական Ասիայում: Բացահայտելու դրանց ընդհանրությունները և առանձնահատկությունները ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև գլոբալ պատմության հետնախորքում: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ակադեմիական հետազոտություններում՝ հընթացս պատմական և քաղաքագիտական, քաղաքակրթական և մշակութաբանական թեմաների արծարծման: Դրանք կարող են օգտագործվել բուհական դասընթացների, ծրագրերի, ավարտական աշխատանքների և համապատասխան ձեռնարկների մշակման նպատակով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի խորհրդում: Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնի կողմից: Ատենախոսության հիմնադրույթները հրապարակվել են հեղինակի թվով վեց գիտական հոդվածներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Ատենախոսությունը գրված է հայերեն, անգլերեն, ռուսերեն և ղազախերեն լեզուներով հրապարակված սկզբնաղբյուրների և գիտական գրականության հիմամբ: Իբրև **սկզբնաղբյուրներ** օգտագործվել են արխիվային նյութեր, հուշագրություններ, ազգագրական և վիճակագրական ուսումնասիրություններ, օրենսդրական փաստաթղթեր, հրամանագրեր,

պաշտոնական ելույթներ, որոնց բովանդակային վերլուծությունը թույլ է տվել լույս սփռել ինչպես պատմական, այնպես էլ արդի հիմնախնդիրների վրա:

Ռուսական կայսրության տիրապետության շրջանում ղազախ հասարակության մասին կարևոր տեղեկույթ պարունակող սկզբնաղբյուրների շարքում հարկ է ընդգծել Է. Ս. Վուլֆսոնի, Վ. Ն. Վիտևսկու, Ա. Ի. Լևշինի, Ա. Ն. Խարուզինի, Լ.Մ. Մեյերի և Վ. Ն. Բարտոլդի զեկույցները[5]: Նրանք Կենտրոնական Ասիա գործուղված հետազոտողներ և քաղաքական-ռազմական գործիչներ էին, որոնց հանձնարարված էր ուսումնասիրել և գրի առնել տափաստանի ժողովուրդների մշակույթը, սովորույթները, ներհանրութենական հարաբերությունները և այլն: Այդ ուսումնասիրությունները կարևոր էին տարածաշրջանի արդյունավետ կառավարումը կազմակերպելու համար:

Ղազախական հասարակության մասին կարևոր տեղեկույթ են պարունակում նաև ղազախ մտավորականների աշխատությունները: Նրանց շարքում հատկապես աչքի էին ընկնում Ա. Կունանբաևը, Ի. Ալտնսարինը, Շ. Ուալիխանովը և այլք: Ա. Կունանբաևի «Ղարա սյոզ (Սև խոսք)» պոեմը պատկանում է գրական ողբի ժանրին և պարունակում է կարևոր պատմական տեղեկույթ ղազախների աշխարհաճանաչման մասին[6]:

Ալտնսարինի աշխատանքները կարևոր տեղեկություն են տրամադրում ցարական քաղաքականության, ղազախերենի և կրթական համակարգի կերպափոխությունների մասին[7]: Ղազախների քոչվորական կենսամշակույթի, կրոնական պատկերացումների, ռուսների և տարածաշրջանի ռազմատենչ ցեղերի հետ փոխհարաբերությունների մասին կարևոր տեղեկույթ են պարունակում հատկապես ղազախ ազգագրագետ, պատմաբան, ռազմական գործիչ Չոկան Ուալիխանովի աշխատությունները[8]: Օգտագործված սկզբնաղբյուրների մյուս խումբը վերաբերում է մեր ուսումնասիրության հիմնական խնդրին՝ խորհրդային և հատկապես հետխորհրդային Ղազախստանի ազգապետականաշինությանը: Այս շրջանի սկզբնաղբյուրները հիմնականում պաշտոնական զեկույցների, վիճակագրական տվյալների, ելույթների, օրենսդրական և այլ փաստաթղթերի տեսքով են:

---

[5] **Вульфсон Э. С.**, Киргизы. Составила Э. С. Вульфсон. Природа и люди России. Общедоступные книжки под редакцией А. А. Ивановского, Москва: Издание книжного магазина торгового дома С. Курнин и К°, 1901. **Харузин А. Н.,** Степные очерки (Киргизская Букеевская орда): странички из записной книги, А.Н. Харузин, М.: Типография А. А. Левенсон, 1888. **Левшина А. И.,** Об имени киргиз-кай-сацкого народа и его отличии от подлинных, или диких киргизов, Московский вестник. 1827. **Мейер Л. М.,** Киргизская степь Оренбургского ведомства / Сост. Ген. штаба подполк. Л. Мейер. - Санкт-Петербург : тип. Э. Веймара и Ф. Персона, 1865. **Бартольд В. В.** Отчёт о поездке в Среднюю Азию с научною целью 1893 – 1894 гг. СПб., Типография Императорской Академии наук, 1897. **Витевский В. Н.,** И. И. Неплюев и Оренбургский край в прежнем его составе до 1758 г., т. 3, Казань: Типо-литография В. М. Ключникова, 1897.

[6] **Кунанбаев А**, Избранное, перевод с казахского / А. Кунанбаев ; пер. К. Липскеров [и др.]. Москва: Государственное издательство художественной литературы, 1945. Տես նաև, **Құнанбайұлы А.,** Алматы, «MELOMAN Publishing», 2016.

[7] Տե՛ս, **Ильминский, Н. И.**, Воспоминания об И. А. Алтынсарине: Письма и бумаги И. А. Алтынсарина, Н. Ильминский, Казань: Типо-литография В. М. Ключникова, 1891.

[8] **Валиханов Ч.,** О мусульманстве в Степи в. Т. 4, Собр. соч. Алма-Ата, 1985, с. 63 – 122.

Հետխորհրդային Ղազախստանի մասին կարևոր (բայց նաև սուբյեկտիվ) տեղեկություն են պարունակում նախագահ Ն.Նազարբաևի ինք-նակենսագրական-հուշագրական աշխատությունները: Քաղաքական առանցքային գործընթացների և որոշումների մշակման, մեկնարկի, նպատակների և ակնկալվող արդյունքների մասին առաջնային տեղեկույթ ստանալու համար ատենախոսությունում օգտագործվել են Նազարբաևի հեղինակած մի շարք աշխատանքներ[9]:

Հետխորհրդային կարևոր տեղաշարժերի մասին սկզբնաղբյուր են ծառայել նաև 1993 և 1995 թվականների սահմանադրությունները[10] և նախագահ Նազարբայեվի՝ ժողովրդին հղված տարբեր ելույթ-ուղերձները: Իբրև սկզբնաղբյուր վերլուծվել են նաև ապագայատեսական **«Ղազախստան 2030»** և **«Ղազախստան 2050»** պետական ծրագրերը: Այս փաստաթղթերն ըստ էության հետխորհրդային ազգաշինական հարացույցի ուրվագծերն են՝ առաջադրված քարիզմատիկ առաջնորդի կողմից[11]:

Ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ որպես երկրորդային սկզբնաղբյուր են ծառայել գիտական տարբեր հետազոտություններ՝ գրքեր, հոդվածներ և վերլուծություններ: ՈՒսումնասիրվող հիմնախնդիրը հղացականացնելու նպատակով օգտագործվել են տեսաբաններ Ա. Թոյնբիի, Է. Սմիթի, Բ. Անդերսոնի, Ս. Հանթինգթոնի, Էդ. Սայիդի, Լ. Ն. Գումիլյովի, Յ. Մ. Լոտմանի և այլոց տեսական մոտեցումներն ու ըմբռնումները[12]: Հետխորհրդային Ղազախստանի ազգային ինքնության և պատմական մտքի փոխազդեցությունները հասկանալու համար կարևոր են խորհրդային հետազոտողներ Ս.Դ. Ասֆենդիարովի, Ե. Կ. Բեկմախանովի, Ա. Ի. Պանկրատովայի, Ն. Բ. Ախմետովայի, Ն. Գ. Ապպոլովայի պատմագրական

---

[9] **Նազարբաև Ն.,** Ղազախստանյան Ուղի, Երևան,Տիգրան Մեծ, 2008. **Назарбаев Н.,** В Сердце Евразии, 2-е издание, Алматы: Атамұ ра, 2008. **Назарбаев Н.,** Стратегия становления постиндустриального общества и партнерство цивилизаций, Москва: Экономика, 2008. **Назарбаев Н.,** Критическое десятилетие, Алматы: Атамұ ра, 2003. **Назарбаев Н.,** Стратегия Независимости, Алматы : Атамұ ра, 2003. **Назарбаев Н.,** На пороге XXI века, Алматы: Атамұ ра, 2003.

[10] **Конституция Республики Казахстан** – 1993. **Конституция Республики Казахстан** – 1995.

[11] **Назарбаев Н. А.,** Послание Президента Республики Казахстан народу Казахстана "Казахстан-2030: Процветание, безопасность и улучшение благосостояния всех казахстанцев"(10 октября 1997 года). Официальный Сайт Президента Республики Казахстан, URL: http://www.akorda.kz/kz/republic_of_kazakhstan/kazakhstan (10.03.2014). **Назарбаев Н. А.,** Стратегия «Казахстан-2050», Новый политический курс состоявшегося государства, Послание Президента Республики Казахстан - Лидера Нации Н. А. Назарбаева Народу Казахстана, Официальный Сайт Президента Республики Казахстан URL: http://www.akorda.kz/kz/republic_of_kazakhstan/kazakhstan (09.04.2015)

[12] **Arnold J. Toynbee**, A Study of History: Volume I: Abridgement of Volumes I-VI, ed., D. C. Somervell, London: Oxford University Press, 1987. **Smith A.,** Ethno-Symbolism and Nationalism: A Cultural Approach, London, New York: Routledge, 2009. **Anderson B.,** Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism, London: Verso Press, 2006. **Huntington S.,** The Clash of Civilizations and the Remaking of Order, New York: Simon and Shuster,1996. **Гумилев Л. Н.** Ритмы Евразии. Эпохи и цивилизации / [предисл. С. Б. Лаврова]. – Москва : Прогресс. Фирма «Прогресс–Пангея» : Центр экол. просвещения и развития «Экопрос», 1993. **Лотман Ю. М.,** Семиосфера, Санкт-Петербург: «Искусство-СПБ», 2000. **Said E.**, Orinetalism, New York: Vintage Books, 1979.

բնույթի աշխատանքները[13]: Պատմական նույն իրողությունների մասին սկսեցին այլ շեշտադրումներով խոսել արդեն հետխորհրդային ղազախ հետազոտողները, որոնք պատմությունը ուսումնասիրում են ազգային և պետականության գաղափարների լույսի ներքո: Այս առումով աշխատանքներ կատարեցին Ս. Կ. Իգիբաևը, Ա. Լ. Աբդակիմովան, Ժ. Բ. Աբիլխոժինը[14]: Այս նույն տրամաբանությամբ աչքի է ընկնում նաև ղազախ պատմագետներ Կ. Մ. Բայպակովի, Բ. Ե. Կումեկովի և Կ. Ա. Ակիշևի խմբագրած Ղազախստանի պատմության չորսհատորյակը[15]:

Օգտագործված գիտական գրականության մյուս խումբը վերաբերում է հետխորհրդային Ղազախստանի ազգաշինության ամենատարբեր ոլորտներին՝ լեզվաքաղաքականություն, կրոն, մշակույթ, էթնոքաղաքականություն, քաղաքաշինություն, արտաքին քաղաքականություն և այլն: Այս առումով աչքի են ընկնում ինչպես ղազախ, այնպես էլ ռուս և արևմտյան հետազոտողները՝ Գ. Յեմելիանովա, Մ. Օմելիչևա, Ս. Եսենովա, Ա. Սարսամբաև, Դ. Կուդայբերգենովա[16]: Լայնորեն կիրառվել են արևմտյան հեղինակների՝ Մ. Բրիլ Օլքոտի, Ջ. Նազպարիի, Վ. Բաքլիի, Ա Հոգենի, Ս. Քումինգսի, Ու. Ֆիրմանի հետազոտությունները[17]: Հատկապես ուշադրության է արժանի Բ. Դեյվի «Ղազախստան: Էթնիկություն, լեզու և իշխանություն» աշխատանքը, որտեղ հեղինակը փորձել է շատ խնդիրներին մոտենալ հետգաղութատիրության տեսության դիտանկյունից, մի բան, որ նորույթ է ղազախստանյան գիտական

---

[13] **Асфендиаров С. Д,**, История Казахстана (с древнейших времен), т. 1., Алма-Ата; М.: Казах. краев. изд-во, 1935. **Панкратова А.М.** Основные вопросы истории Казахской ССР (К выходу в свет книги «История Казахской ССР с древнейших времён до наших дней»), Большевик Казахстана. 1943. № 10. **Бекмаханов Е.**, Казахстан 20-40 годы XIX века: 20-40 годы XIX века, под ред. Жиенгалиев Н. Б., Алма-Ата, 1992. **Аполлова Н.Г.**, Присоединение Казахстана к России в 30-х годах XVIII века. -Алма-Ата: Изд-во АН КазССР, 1948. **Ахмедова Н. Б.** Советский Казахстан за 40 лет (Расцвет экономики и культуры Казахстана за годы Советской власти), Алматы, 1961.

[14] **Абдакимов А. Л.,** История Казахстана (с древнейших времен до наших дней), Алматы; РИК, 1994. **Абылхожин Ж. Б.** Традиционная структура Казахстана: социально-экономические аспекты функционирования и трансформации (1920-1930 гг.), Алма-Ата: Гылым, 1991. **Игибаев С. К.**, Историография истории Казахстана, Алматы: Ассоциация вузов, 2013.

[15] **Байпаков К. М., Кумеков Б. Е., Акишев К. А.,** ред. История Казахстана. В четырех томах, т. I–IV, Алматы, Атамура, 1996 – 2000.

[16] **Sarsembayev A.,** Imagined communities: Kazak nationalism and Kazakifcation in the 1990s, Central Asian Survey, Vol. 18, No. 3, 1999. **Yemelianova G. M.,** Islam, National Identity and Politics in Contemporary Kazakhstan, Asian Ethnicity, Vol. 15, No. 3, 2014, pp. 286-301. **Omelicheva M. Y.,** Islam and Power Legitimation: Instrumentalisation of religion in Central Asian States, Contemporary Politics, Vol. 22, No 2. 2016, pp. 144-163. **Yessenova S.** Routes and Roots of Kazakh Identity: Urban Migration in Post socialist Kazakhstan, Russian Review Vol 64, No. 4, 2005, pp. 2–20. **Kudaibergenova D. T.,** "Imagining Community" in Soviet Kazakhstan. An Historical Analysis of Narrative on Nationalism in Kazakh-Soviet literature. *Nationalities Papers: The Journal of Nationalism and Ethnicity,* Vol. 41, No. 5, 2013, pp. 839-854.

[17] **Olcott M. B.,** The Kazakhs, Stanford: Hoover Institute Press, 1995. **Haugen A.,** The Establishment of National Republics of Central Asia, Palgrave Macmillan UK, 2003. **Nazpary J.,** Post-Soviet chaos: violence and dispossession in Kazakhstan, London: Pluto Press, 2002. **Fierman W.** Kazakh Language and Prospects for its Role in Kazakh «Groupness», AbImperio, 2, 2005, pp. 393–423. **Buchli V.,** Astana: Materiality And The City in Alexander C., Buchli V., Humphrey C, (Eds.**)** Urban Life in Post-Soviet Asia, Taylor & Francis Group, 2007.

խոսույթում [18] : Նշենք, որ հայկական միջավայրում հետխորհրդային Կենտրոնական Ասիայի հասարակությունների մասին առակա ուսումնասիրությունները խիստ սահմանափակ և հատվածական են: Այդուամենայնիվ, առկա ուսումնասիրությունների շրջանում աչքի են ընկնում պատմագիտական, գրականագիտական և քաղաքագիտական բնույթի որոշ աշխատություններ[19]:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Ատենախոսության հիմնական նորույթը Ղազախստանի հետխորհրդային ազգա-պետականաշինական ինքնակայացման տիպաբանության ուսումնասիրությունն է՝ տարբեր գիտակարգերի համադրությամբ: Համադրություն, որը հարիր է այն բազմաշերտ ու բազմավեկտոր գործընթացներին, որոնք ընթանում են այդ երկրում: Ղազախական անցումային (տրանզիտիվ) հասարակությունը ներկայացվում է քաղաքակրթական ժամանակի երեք չափումների հատույթում՝ կարճ, միջին, երկար տևողություններ: Դրանց արդյունքները դիտարկվում են քաղաքակրթական մարտահրավերների և պատասխանների հոլովույթում: Ղազախական ինքնակայացումը դիտարկվում է էլիտոլոգիայի (ընտրախավագիտության) լուսի ներքո. լուսաբանվում է քարիզմատիկ առաջնորդի և իր շրջապատի կառուցիկ դերակատարությունը Կենտրոնական Ասիայի էթնաքաղաքական միջավայրում, որտեղ դեռ ներունակ են քոչվորական նախակեցաղ կյանքի համակեցական արժեքները: Բացահայտվում են ազգային ինքնակայացման ղազախական նորօրյա հարացույցի (խորհրդանիշեր, կրոն, ազգամիջյան քաղաքականություն, պատմագրություն) ներքին քաղաքակրթական առնչությունները: Սեմիոտիկ վերլուծության է ենթարկվում նոր մայրաքաղաքի իմաստանշանային տարածքը՝ հրապարակներ, տարբեր նշանակության շինություններ, թանգարաններ, հուշարձաններ և այլն: Դրանք նպատակամիտված են ձևավորելու ղազախի (և ղազախստանցու) իբրև մարդու և քաղաքացու նոր կերպարը: Այս առումով զուգահեռներ են անցկացվում Սանկտ Պետերբուրգի, Անկարայի, Բրազիլիայի և Երևանի հետ: Ի վերջո, ատենախոսությունը Ղազախստանի օրինակով հետխորհրդային Կենտրոնական Ասիայում ընթացող տարասեռ ընկերային տեղաշարժերի առաջին համակարգված ուսումնասիրությունն է հայկական միջավայրում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (որոնցից առաջինը բաղկացած է չորս, երկրորդը՝ յոթ և

---

[18] **Bhavna D.,** Kazakhstan: ethnicity, language and power, London, New York: Routledge, 2007.

[19] **Մինասյան Ն.,** Թուրքիայի Քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում (1991-2007), Երևան «Լուսաբաց հրատարակչություն» 2013: **Խաչատրյան Շ.,** Կերպարների զարգացման առանձնահատկությունները Մուխթար Աուեզովի «Դժվար տարիներ» վիպակում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու 2016, 1.5 (15), հասարակական գիտություններ, էջեր 45-49: **Сафарян А., Атаев А.,** К Вопросу О Сотрудничестве Между Арменией И Казахстаном «21-й Век», № 4 (33), 2014, с. 69-79.

երրորդը՝ երեք ենթագլուխներից), վերջաբանից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից ինչպես նաև Հավելվածներից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ նախ համառոտ ներկայացված է հետխորհրդային կերպափոխումների ընդհանրական պատկերը, ապա հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը և գիտական նորույթը: Այն ներառում է նաև հետազոտական նպատակների ու խնդիրների, ժամանակագրական սահմանների, մեթոդաբանության, կիրառված սկզբնաղբյուրների և գիտական ուսումնասիրությունների համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը՝ **«ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ: ԿԵՐԵԻՑ ԵՎ ԺԱՆԻԲԵԿԻՑ ՄԻՆՉԵՎ ՆԱԶԱՐԲԱԵՎ»** ներկայացրել ենք ղազախական պատմական ուղու շարուանակականություններն ու ընդատումները: Այս գլխում ուրվագծել ենք հետևյալ տիպաբանական շրջափուլերը. ա. թյուրքական էթնիկ միասնությունից դեպի Ղազախական խանություն (ազգային ինքնագիտակցության ծիլերը), բ. ղազախները Ռուսական կայսրության կազմում, գ. Խորհրդային Ղազախստանը և դ. ինքնիշխան Ղազախստանը Հանրապետությունը: Սույն գլխում նշված պատմական տարբեր իրողությունները համակողմանիորեն ուսումնասիրելու համար օգտագործել ենք ինչպես առցանց արխիվային տարբեր նյութեր այնպես էլ գիտական ուսումնասիրություններ:

Առաջին՝ **«Թյուրքական էթնիկ միասնությունից դեպի Ղազախական խանություն (ազգային ինքնագիտակցության ծիլերը)»** ենթագլխում համառոտ ներկայացվում են թյուրքական էթնոսի՝ ղազախական տափաստան ներթափանցման գործընթացների և դրանցով պայմանավորված թյուրքական ինքություն ձևավորման իրողությունները: Անդարադարձ է կատարվում ներկլանայային և ցեղային հարաբերություններին, որոնք մեր դիտարկմամբ կարևոր դերակատարություն ունեցան Ղազախական խանության ձևավորման գործում: Ղազախական խանությունը որոշակի ցեղային շարժումների արդյունք էր, որ ղեկավարվում էր Ջոչիի խանության երկու հայտնի խաներ Կերեյն ու Ժանիբեկի կոցմիդ, ովքեր իրենց համարում էին «Օզբեկ ղազախներ» այն է՝ «ազատ, անկախ, արկածախնդիր և այլն»[20]: Սակայն այս միավորումը տակավին հեռու էր բառիս բուն իմաստով պետական միավոր լինելուց: Այն վերցեղային էթնիկ կազմավորում էր, որի հիմքում հստակ ուրվագծվում էին տոհմացեղային բարքերը, կառույցները և ընկերային հարաբերությունները: Արդեն 18-րդ դարում ջունգարական ցեղերի ներխուժման սպառնալիքի պատճառով ղազախական տափաստանում ստեղծվել էր ռազմաքաղաքական խոր ճգնաժամ: Մեր ձևակերպմամբ այս ճգնաժամը հող նախապատրաստեց ղազախաբնակ տարածքների նկատմամբ ռուսական գերիշխանության հաստատման համար, որը տեղի ունեցավ մի քանի շրջափուլերով:

[20] **Golden P.B.,** Central Asia in World History, նշվ աշխ., էջեր 103-105.

Երկրոդ՝ **«Ղազախները Ռուսական կայսրության կազմում»** ենթագլխում ներկայացվում են ցարական Ռուսաստանի քաղաքականությունը Ղազախական տափաստանի նկատմամբ: Ռուսական ներկայությամբ Ղազախական տափաստանում սկսվեց հասարակական կերպափոխումների մի նոր գործընթաց, որն ուղեկցվում էր կրթական, մշակութային, հասարակական, եթնակառուցվածքային և մի շարք այլ ոլորտների արդիականությամբ: Պետք է արձանագրել, որ արդիականացման այդ ալիքը հիմք դրեց նաև կրթական, մշակութային, ինքնութենական և ժողովրդագրական այլակերպումների:
Ռուսական գերիշխանության հաստատման քաղաքականությանն ի պատասխան Ղազախական տափաստանում բռնկվեց հզոր հակառուսական ազատագրական ապստամբություններ: Մեր մոտեցմամբ ազգային ինքնագիտակցության բարձրացման առումով հատկապես աչքի էր ընկնում 1837 – 1847 թվականներին Կենեսարի Կասիմ Ուլայի ապստամբությունը և 1916 թվականի Ալաշ Օրդա շարժումը: 1917 թվականին կործանվեց Ռուսական կայսրությունը. Ալաշ Օրդան հաստատութենացվեց և վերածվեց ազգային քաղաքական կուսակցության, ապա ստեղծվեց Ալաշ Օրդա կառավարությունը:
Երրորդ՝ **«Խորհրդային Ղազախստան»** ենթագլխում քննության ենք ենթարկում Ղազախստանի պատմության խորհրդային շրջափուլը: Պետական միավորը՝ Ղրղզական Խորհրդային Ինքնավար Հանրապետությունը, խորհրդային պատմագրության մեջ ներկայացվում էր իբրև ղազախական առաջին պետականություն՝ ձեռք բերված շնորհիվ ռուս մեծ ազգի եղբայրական օգնության: Միայն անվանումը հնացած կայսերական էր. հետազոտողներից շատերի համոզմամբ՝ «ղրղզ» էթնոնիմը ղազախներին տրվել էր, որպեսզի չշփոթեն նրանց ռուսական կազակների հետ [21] : Չնայած ինքնութենական այլակերպումների նոր գործընթացներին՝ մեր դիտարկմամբ Ղազախստանի պատմության խորհրդային փուլը շրջադարձային նշանակություն ունեցավ նոր ազգի կայացման և զարգացման ճանապարհին: Այս առումով անդրադարձ ենք կատարել խորհրդային քաղաքականության երկու զուգահեռ ուղղություններին՝ ռուսականացման և արդիականացման (արդյունաբերություն, քաղաքաշինություն, կրթություն և մշակույթ): Ժամանակաշրջանը նշանավորվեց նախ ժողովրդագրական նոր տեղաշարժերով հայրենական պատերազմին նախորդած և հաջորդած տարիներին: Այս իրողությունը խեղեց հանրապետության առանց այդ էլ անբարենպաստ ժողովրագրական պատկերը: Այս գործընթացների համատեքստում զուգահեռաբար ուսումնասիրել ենք ղազախական ազգային լեզվի և մշակույթի լուսանցքայնացման գործընթացները, որոնք հետագայում լուրջ մարտահարավերն պետք է հանդիսանային հետխորհրդային ազգաշինության համար:
Չորրորդ՝ «Ինքնիշխան Ղազախստանի Հանրապետությունը» ենթագլխում Ղազախստանի ինքնիշխանության շրջանը ներկայացրել ենք իբրև էթնիկ և

[21] **Левшин А. И.,** Об имени киргиз-кай-сацкого народа с. 432-451.

ընկերային նորացման նոր դարաշրջանի սկիզբ: Անդրադարձ է կատարվել երկրի կառավարման համակարգին՝ ներկայացնելով գործադիր, օրենսդիր և դատական ինստիտուտների կայացման գործընթացը: Դիտարկել ենք նաև տնտեսության էներգետիկ և երկրագործական ոլորտների դերը ազգային պետականաշինության և կենտրոնաձիգ իշխանության կայացման գործում: Այս համատեքստում կարևորել ենք ռազմաարդյունաբերական համալիր դերը, որն ըստ գործող իշխանական համակարգի առանցքային նշանակություն ունի ազգային անվանգության, պետության ինքիշխանության, տարածքային անխախտելիության և միջազգային համագործակցության համար: Սույն ենթագլխում ամրագրվում է, որ պետական ինստիտուտների կայացման և տնտեսության կազմակերպման գործընթացից ոչ պակաս կենսական նշանակություն ուներ արտաքին քաղաքականության նոր և ճկուն հայեցակարգի մշակումը: Այս առումով պետք է արձանագրել, որ բազմավեկտոր աշխարհին մասնակցելու և քաղաքական տարբեր կենտրոնների հետ հավասարակշիռ հարաբերություններ հաստատելու նպատակով Ղազախստանը որդեգրել է «բազմավեկտոր արտաքին քաղաքականության» հայեցակարգը: Այն հնարավորություն է տալիս երկրին հավասարակշիռ հարաբերություններ հաստատել մուսուլմանական, թյուրքական, ռուսական, ասիական և արևմտյան բևեռների հետ:

Երկրորդ գլուխում՝ **«ՂԱԶԱԽՍՏԱՆ. ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ»** քննության ենք ենթարկում ղազախական հավաքականության արդիականացման համալիր ծրագիր, որը մեր գնահատմամբ հնարավորություն կտա Ղազախստանին նորովի ներկայանալ աշխարհին: Այս գլխում լուսաբանել ենք այս գործընթացի միայն մի քանի հիմնարար դիտանկյուններ՝ հասկանալու համար այն տեղաշարժերը, որոնք առնչվում են ազգային լեզվին, խորհրդանիշերին, կրթությանը, կրոնին, միջէթնիկ հարաբերություններին և պատմագրությանը: Ազգաշինության այս նոր փորձառության սկիզբը ունի նպատակ ձերբազատվել անցյալի խոտորումներից, վերադառնալ նախնյաց բարքերին և կառուցել ազգային նորը՝ օգտագործելով Արևմուտքի և Արևելքի հիմնարար մտահոգևոր ու արտադրական տեխնոլոգիաները: Այսպիսով, Ն. Նազարբաևի վարչակազմի խնդիրն է առանց ավելորդ զգացունքայնության հավասարակշռել նախկին մետրոպոլիան, իսլամը և քրիստոնեությունը, ազգային հիշողությունը և արդիականությունը, թույլ զարգացած ղազախերենը և աշխարհի զարգացած լեզուները (ռուսերեն, անգլերեն), թյուրքական ունիվերսալիզմը և ղազախական լոկալիզմը, ազգային դիքատոմիան և բացարձակ միավորման ուտոպիան: Վերոնշյալ հիմնախնդիրների ուսումնասիրման համար բովանդակային քննության ենք ենթարկել խորհրդային և նորանկախ Ղազախստանի սահմանադրությունները, **«Ղազախստան 2030»** և **«Ղազախստան 2050»** ռազմավարական նշանակության փաստաթղթերը, պետական մի շարք օրենքներ, նախագահական և պաշտոնական այլ ելույթներ:

Առաջին՝ «Լեզվաքաղաքականություն» եթնագլխում քննության ենք ենթարկում ղազախերեն լեզվի դերակատարությունը ազգային ինքնության կայացման և կառավարման գործում: Ղազախստանի արդի լեզվաքաղաքականության խորքային շերտերը վեր հանելու համար քննության ենք ենթարկել նաև լեզվաքաղաքականության համապատմական բովանդակությունը: Սույն ենթագլխում քննարկում ենք, թե ինչպես է Նազարբաևի լեզվական քաղաքականությունը փորձում հաղթահարել ազգային լեզվի լուսանցքայնացումը: Այն տեղի է ունենում ի հաշիվ ղազախերենի հանրայնացման, պաշտոնական գրագրությունը և ռադիո-հեռուստատեսային հեռարձակումը ազգային լեզվով կազմակերպման, ղազախալեզու համալսարանական և հանրային կրթության ներդրման և այբուբենի կիրիլիցայից լատինականի անցման: Մեր դիտարկմամբ ղազախերենի հանրայնացումը ուղղիղ կապի մեջ է պետության ղազախականացման գործընթացների հետ: Մյուս կողմից սույն ենթագլխում քննարկման ենք ենթարկել նաև արդի ղազախական լեզվաքաղաքականության քաղաքացիական բաղադրիչը, որով ղազախերենը ձևակերպվում է իբրև միջնորդ և պետականության խորհրդանիշ բազմաէթնիկ հասարակություն համար:

Երկրորդ՝ «Ինքնության ազգային-պետական խորհրդանիշերը» ենթագլխում բովանդակային ուսումասիրության ենք ենթարկել նորանկախ Ղազախստանի պետական խորհրդանիշները՝ հիմնը, դրոշը և գերբը: Մեր դիտարկմամբ ազգային խորհրդանիշերի դերը հույժ կարևոր է բազմամշակույթ Ղազախստանի ազգաշինության և՛ էթնիկ, և՛ սոցիալական, և՛ քաղաքացիական գործընթացների համաձիրում: Դրանք առանցքային ազդեցություն ունեն հասարակական տարբեր խմբերի միջև կոլեկտիվ ինքնության զգացողություն և գիտակցություն ձևավորել գործում: Համզված ենք, որ երևույթն առանձնակի կարևորություն ունի Ղազախստանում, որտեղ վարչակարգը ձգտում է ձևավորելու վերէթնիկ ընկերային և քաղաքական ինքնություն: Նպատակին հետամուտ՝ Նազարբաևը ձեռնամուխ եղավ մի շարք համակարգային վերափոխումների, որոնք ուղեկցվեցին կառավարման նոր ռազմավարության և հաստատությունների ձևավորումից մինչև պետական խորհրդանիշների՝ հիմնի, դրոշի և գերբի փոփոխությամբ:

Երրորդ՝ «Կրթական նորացման ծրագիրը» ենթագլխում ներկայացվում է նորանկախ Ղազախստանի հասարակական նորացման կարևորագույն օջախներից մեկը՝ կրթական համակարգը: Նախ և առաջ խնդիր է դրված ներդնելու ղազախալեզու կրթական համակարգ, որը հնարավորություն կտա սկսել ռուսական կրթամշակութային գերիշխանության հակազդման երկարատև գործընթաց: Մեր դիտարկմաբ այս գործընթացի լրջագույն մարտահրավերը ղազախերեն դասագրքերի ստեղծման հիմնախնդիրն է: Չնայած դասապրոցեսի ղազախականացման միտումին, Ղազախստանի շատ դպրոցներում՝ հիմնական ու բարձր, ղազախերեն են միայն մայրենի լեզվի, գրականության և պատմության դասագրքերը. ճշգրիտ գիտությունները՝ մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա,

աստղագիտություն, կենսաբանություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն, դասավանդվում են ռուսերեն և երբեմն նաև թուրքերեն և անգլերեն լեզուներով: Սույն ենթագլխում անդրադարձ է կատարվում նաև կրթական նորացման ծրագրի արևմտյան բաղադրիչին: Միանգամայն նոր երևույթ է անգլալեզու դպրոցների և համալսարանների հիմնումը: Բարձրագույն կրթության արևմտյան կրթական ստանդարտի կողքին Ղազախստանում հիմնվեցին իսլամական հումանիտար դպրոցներ (լիցեյներ) և համալսարաններ: Այս կրթական օջախները, մի կողմից հիմք են ստեղծում իսլամի տարածման և ամրապնդման համար, մյուս կողմից դրանք ակնհայտ մարտահրավերներ են գործող համակարգին: Խնդիրն այն է՝ կկարողանա Նազարբաևի վարչակարգը հավասարակշռություն ստեղծել արևմտյան և իսլամական կրթակարգերի միջև:

Չորրորդ՝ «Իսլամը և կրոնական ինքության նոր հարացույցը» ենթագլխում քննության ենք ենթարկում իսլամի մարտահրավերները: Ի տարբերություն իսլամական պատմական ավանդույթ ունեցող մի շարք կենտրոնասիական երկրների, Ղազախստանն իր առջև ծառացած խնդիրներին չպատասխանեց իսլամով և զերց մնած արմատական իսլամի դրսևորումներից: Այդուամենայնիվ, պետք է նշել, որ իսլամի քաղաքակրթական արժեքները հիմնովին դուրս չեն մնացել արդի Ղազախստանի ազգաշինական գործընթացից:

Սույն ենթագլխում դիտարկել ենք նաև իսլամի և արտաքին քաղաքկանության փոխհարաբերությունները: Իսլամի չափավոր քաղաքականությունը Ղազախստանին հնարավորություններ է տալիս կապեր հաստատել մուսուլմանական աշխարհի առանցքային այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են Թուրքիան, Սաուդյան Արաբիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, Եգիպտոսը: Մյուս կողմից մուսուլմանական այդ երկրներին հնարավորություն էր տրվելու ամրապնդել իսլամի դիրքերը Ղազախստանում: Սա մի նոր մարտահրավեր է, որին Ղազախստանը պատասխանում է արտաքին իսլամի «զսպման քաղաքականությամբ»: Այս կապակցությամբ Ղազախստանի կրոնական քաղաքականության ծիրում հստակ ուրվագծվում է երեք վեկտոր. ա. չսրել հարաբերությունները ռուսական ուղղափառ համայնքի հետ, բ. հավատարիմ մնալ ազգաշինության քաղաքացիական ուղեգծին, գ. վերահսկողություն հաստատել երկրի կրոնական ոլորտի նկատմամբ՝ բացառելով քաղաքական իսլամի զարգացումը:

Հինգերրորդ՝ «Ղազախստանը և թյուրքական ինքնության աշխարհաքաղաքական չափումը» ենթագլխում Ղազախստանի ազգային ինքնության նոր հարացույցի կարևոր բաղադրիչը՝ թյուրքական շերտը, ուսումնասիրել ենք տարածաշրջանի աշխարհաքաղաքական խճանկարում, որտեղ հանդիպում են Ղազախստանի, Ռուսաստանի, Չինաստանի և Թուրքիայի աշխարհաքաղաքական շահերը: Ներկայացվում է Կենտրոնական Ասիայում ընդհանրական թյուրքական ինքնության ձևավորման միտումները: Թյուրքախոս երկրների միավորմամբ Թուրքիան փորձում է առաջնորդի դիրքեր

ապահովել, որը առաջ բերեց և՛ Ռուսաստանի, և՛ Չինաստանի, և՛ Ղազախստանի բացահայտ դժգոհությունը:

Վեցերրորդ՝ «Միջէթնիկ հարաբերությունների կառավարումը» ենթագլխում ուսումնասիրում ենք Նազարբաևի վարչակարգի մշակած քաղաքական, մշակութայիյն և հասարակական այն մեխանիզմները, որոնք ազգաշինության համատեքստում թույլ են տալիս կառուցել միջհասարակական կայուն հարաբերություններ շուրջ 130 էթնիկ և 17 կրոնական խմբերի միջև: Քաղաքացիներին ազգային իրավահավասարություն և ազատություն հիմնադրույթի գործնական դրսևորումը եղավ Ղազախստանի Ժողովուրդների Ասամբլեայի ստեղծումը: Կառույցն իր քաղաքական, մշակութային, հասարակական և կրթական բաժիններով մասնակցային միջավայր է: Պետք է արձանագրել, որ միջէթնիկ հարաբերությունների կառավարման գործում կարևորագույն ձեռքբերումներից էր տարբեր էթնոսների շրջանում ղազախստանցու կերպարի արմատավորումը: Ղազախստանի ժողովուրդների ասամբլեան վերանվանվեց Ղազախստանի ժողովրդի ասամբլեա, որով փորձ էր կատարվում ստեղծել **«ղազախստանցի»** ազգի գաղափարը, մի բան որը ժամանակին փորձում էր ներմուծել Բորիս Ելցինը, երբ առաջադրում էր **ռուսաստանցի** (россиянин) հղացքը:

Յոթերրորդ՝ «Ազգային ինքնությունը և պատմական միտքը» ենթագլխում վերլուծվում է ազգային ինքության և պատմահայեցողության մի քանի շերտեր: Առաջինը էպիկական պատմահայեցողությունն է: Պետք է նշել, որ էպիկական ասքերում արծարծվում էին առաջադեմ գաղափարներ ինչպես օրինակ ազգային համախմբումը և պետականության ձևավորումը: Ղազախական միջավայրում պատմության բանական ընկալումներն սկսեցին իրական կերպարանք ստանալ լոկ 19-րդ դարի երկրորդ կեսից: Մասնագետ պատմաբաններ չկային, սակայն ականավոր լուսավորիչների ստեղծագործություններում նոր ընկալումներն ակնհայտ էին: Ուսումնասիրողներն առանձնացնում են հատկապես Շոկան Վալիխանովին, Իբրայ Ալթինսարինին և Աբայ Կունանբաևին, որոնց կրթական, ազգագրական, լեզվաբանական, գրական ընկալումներում պատմությունն արդեն ներկայանում է իբրև հետազոտական ուրույն միջավայր: Խորհրդային ժամանակաշրջանում էպիկական ասքը վերասերվեց և սկսեց օգտագործվել կոմունիստական գաղափարախոսությունը հանրածայնելու նպատակով: Այս ժամանակաշրջանում Ղազախստանում սկսեց զարգանալ պատմագիտական միտքը: Արձանագրենք, որ արդի Ղազախստանում փորձեր են արվում վերիմաստավորելու երկրի պատմական հեռանկարը: Վերանայվում էին անցյալի վերաբերյալ շատ եզրույթներ, հասկացություններ և հղացքներ, որոնք «չափավոր հակախորհրդային» բովանդակություն ունեին: Շեշտը դրվում էր անցյալի հերոսական դրվագների և «անանց» արժեքների վրա, որոնք խաթարվել էին ցարական և խորհրդային շրջաններում: Միևնույն ժամանակ խոսվում էր ղազախների պատմական առաջընթացի մասին՝ ձեռք բերված զրկանքների և կորուստների ճանապարհով: Փառաբանվում էր ինքնիշխան ներկան և ապագան: Մեր դիտարկմամբ առկա է ձգտումը ամեն կերպ ցույց տալ

ղազախստանի համաքայլությունը համաշխարհային քաղաքակրթության հետ՝ մշակույթի և կրոնի, գիտության և գրականության, ընկերային արժեքների և պետականության ասպարեզներում:

Երրորդ գլխում՝ **«ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ. ԱՍՏԱՆԱ»** քննության ենք ենթարկում մայրաքաղաքի տեղափոխման հիմնախնդիրը: Մեր դիտարկմամբ Նազարբաևի վարչակարգը որոշում էր կայացրել՝ քաղաքային միջավայրի միջնորդությամբ ստեղծել ազգային ինքնության նոր կենսատարածք: Սույն գլխում մերօրյա Աստանան լոկալ (Ղազախստան, Կենտրոնական Ասիա) և գլոբալ (համաշխարհային փորձառություն) հեռանկարում: Մեր ընկալմամբ՝ Աստանայի նախագիծը պատմության մարտահրավերների ղազախական պատասխանն է:

Առաջին՝ **«Քոչվորական հավաքատեղիից դեպի արդիական քաղաք»** ենթագլխում համառոտ ներկայացվել է Աստանայի՝ նախակենցաղ անասանպահական քոչի հավաքատեղիից քաղաքային միջավայրի վերածվելու գործընթացը: Աստանան տեղակայված է Ղազախստանի հյուսիսային հատվածում՝ Ակմոլայի մարզում՝ Իշիմ գետի ափին, որի տարածքը ռուսական տիրապետության հաստատումից ի վեր սկսեց բնակեցվել սլավոնական էթնոսով: Եվ հընթացս ժամանակի նրանց թվաքանակը գերազանցեց տեղաբնակներին, և արդեն 1832 թվականին Ակմոլան կամ Ակմոլինսկը (արդի Աստանա) բերդաքաղաքի կարգավիճակ ստացավ: Ակմոլայի մասին «հիշեցին» խամ ու խոպան հողերի յուրացման խրուշչյովյան տենդի ժամանակ: 1962 թվականին արդեն 100 հազար բնակչությամբ այն վերանվանվեց Ցելինոգրադ և այդպես մնաց մինչև 1992 թվականը:1992-ից մինչև 1998 թվականը քաղաքը կրկին անվանակոչվեց Ակմոլա, որը 1998 թվականի մայիսի 6-ին, նախագահական հրամանագրով Ակմոլան վերանվանվեց Աստանա՝ ղազախերեն մայրաքաղաք:

Երկրորդ՝«Աստանան իբրև նոր հետխորհրդային տեքստ» ենթագլխում ուսումնասիրվում է մայրաքաղաքը Ալմա Աթայից Աստանա տեղափոխման քաղաքական գործընթացը: Մեր դիտարկմամբ մայրաքաղաքի տեղափոխման պաշտոնական հիմնավորման հիմքում առկա են քողարկված ազգաշինական միտումներ: Ենթադրելի, որ քաղաքական նոր կենտրոնի կառուցումը միտված էր «փրկելու» երկրի ռուսախոս հյուսիսը, որի՝ Ռուսաստանին միացնելու նախաձեռնությամբ հանդես էին գալիս բազում ռուս մտավորականներ: Նոր մայրաքաղաքը ներկայանում էր իբրև ամենայն ղազախականի համակարգման և հանրայնացման միջավայր: Միջավայր, որը պետք էր կազմակերպվեր նախ և առաջ վիզուալ-գեղագիտական (ճարտարապետություն) և խորքային խորհրդանշանային համակարգերի հավասարակշիռ համադրությամբ: Աստանայի ղազախական քոչվորական կենսաձևի և արդիական նշանային համակարգերի ուսումնասիրումը թույլ է տալիս պատկերացումներ կազմել Ղազախստանի էթնիկ և քաղաքացիական ազգային գործընթացների մասին:

Երրորդ՝ **«Աստանայի փորձառությունը քաղաքակրթական զուգահեռներում»** ենթագլխում Աստանան դիտարկվում է համապատմական հոլովույթում: Այն ներկայացվում է իբրև Նազարբաևի և իր ընտրխավի քաղաքակրթական ինքնարարումի նախագծի: Այս մոտեցման հիմնավորման համար Աստանայի փորձառությունը ուսումնասիրվել է քաղաքակրթական անցումնային շրջափուլերի ռուսական (Մոսկվայից Ս. Պետերբուրգ), թուրքական (Ստամբուլից Անկարա), բրազիլական (Ռիո դե Ժանեյրոյից Բրազիլիա), և հայկական (Երևան), տարատեսակների համեմատությամբ: Պատմականորեն իրարից հույժ տարբեր փորձառությունների ուսումասիրությունը հնարավոր է դարձելամերիկացի տեսաբան Ս. Հանթինգթոնի՝ **ճեղքված քաղաքակրթությունների** (torn civilizations) տեսական հղացքի պարագայում [22] : Մեր եզրակացությամբց մայրաքաղաքային բոլոր տարակերպերը ծնունդ էին ճեղքված քաղաքակրթական միջավայրերի և նպատակ ունեին ձևավորելու ուտոպիկ-բանական ճարտարապետական միջավայրեր ինքնության նոր հարացույցերի ձևավորման համար:

Եզրակացություններ

Հանրագումարի բերելով ատենախոսության հիմնական արդյունքները՝ ցանկանում ենք ընդգծել հետևյալ եզրահանգումները, որոնք մեր կարծիքով առավել կարևոր են.

Ա. Հետխորհրդային Ղազախստանի ազգաշինության և պետականաշինության արդիականացման գործընթացն ունի պատմական կարևոր նշանակություն, որը լույս է սփռում ոչ միայն անցյալի, այլև ներկայի վրա: Ներկայի մարտահրավերների մասին առավել ընդգրկուն պատկերացում տալիս է անցյալի ուսումնասիրությունը: Ղազախստանի պատմությունն առանձնանում է ինքնության հարացույցերի հերթագայությամբ: Ղազախների ինքնությունն ունի պատմական տարբեր շերտեր՝ **թյուրքական, ռուսական և ղազախական-ազգային**: Մինչ քաղաքական ինքնակազմակերպման խանության փորձառությունը, ղազախները ապրում էին **քոչվորական նախակենցաղ կյանքով**՝ զուրկ հայրենի տարածքի և սեփական ինքնության գիտակցությունից: Այս հարաբերություններում առանցքային տեղ ունեին **կլանային և տոհմացեղային հարաբերությունները**: Տոհմացեղային հարաբերությունները խորքային ազդեցություն ունեին հասարակական խմբերի քաղաքական համախմբման գործում: Արդյունքը **«ղազախ» էթնիկ հղացքի** առաջադրումն էր: Ղազախական խանության հիմնումից սկսած, ղազախ եզրն սկսեց վերածվել խանության տարածքում ապրող էթնիկ խմբերին բնութագրող էթնոնիմի՝ ճանապարհ հարթելով դեպի հանրության այն մակարդակը, որը բնութագրվում է իբրև ժողովուրդ:

Բ. Ղազախների ինքնության հարացույցի մյուս մակարդակը պայմանավորված էր ռուսական ներկայությամբ: Նախ՝ ղազախական

[22] **Huntington S.,** The Clash of Civilizations and Remaking the World Order. New York: Simon and Schuster, 1996, pp. 138-139:

տափաստանը հայտնվեց Ռուսական կայսրության վերահսկողության ներքո, ապա իբրև Խորհրդային Ղազախստան՝ ԽՍՀՄ կազմում: Ցարական Ռուսաստանը, չնայած բացահայտ գաղութային քաղաքականությանը, արդիականացման նոր պայմաններ ստեղծեց ղազախական տափաստանում: Այս ժամանակաշրջանում է, որ ժողովուրդը **տարածքի նկատմամբ ձևավորում է էթնոմշակութային պատկանելության իր ըմբռնումը:** Մյուս կողմից՝ տեղի է ունենում ավանդական ինքնության ապակառուցում. ռուսականության գերիշխանությամբ լուսանցքում հայտնվեցին ղազախների լեզուն և ավանդական ինքնությունը: Խորհրդային Միությունը ղազախ հասարակությունում առաջին անգամ փորձարկեց մի նորարարական տեխնոլոգիա, այն է՝ ազգային ինքնության ներդրման գաղափարը: Գործընթաց, որն ընթացավ հաստատութային և նորմատիվ չափորոշիչների ներդրմամբ: Այդ կերպ **«հետամնաց ժողովուրդները պետք է փոխակերպվեին սոցիալիստական ազգերի»:**

Գ. Անկախության առաջին տարիներից ակնհայտ դարձավ, որ Կենտրոնական Ասիայում կայանում է բազմաէթնիկ մի պետություն՝ Արևմուտքի և Արևելքի ազգաշինական ձեռքբերումների հիբրիդացման ճանապարհով: Ներհանրութային համաձայնության առումով կարևոր են Ղազախստանի ազգաշինության գործընթացի երկու բաղադրիչները՝ **էթնիկական-ազգային և քաղաքացիական:** Դրանց կիրարկումը ուղեկցվում է նոր լեզվաքաղաքականությամբ, խորհրդանշական (ազգային դրոշ, գերբ, տոներ), կրթական և էթնիկ-վարչական ճիգերի համադրմամբ: Ինչպես նաև՝ նոր քաղաքաշինությամբ: Նազարբայան վարչակարգը փորձում է լուծել մի շատ կարևոր խնդիր. երկար տևողության ժամանակահատվածում ազգին հնարավորություն տալ շրջանցելու **ցեղային-կլանային հարաբերությունների մնացուկները:** Տեղի է ունենում խզում նախկին ինքնութենական հարացույցից. ազգային ինքնանույնացման գործընթացն այլևս միջնորդավորվում է ազգային և քաղաքացիական միջավայրերով, որոնց համադրվում են նաև ավանդական արքետիպերը: Հանրագումարում՝ Նազարբաևի վարչակարգը կարելի է բնութագրել ըստ **ինքնիշխանության (ավտորիտարիզմ) և ժողովրդավարության միջանկյալ վիճակի տիպաբանությամբ**:

Դ. Հետխորհրդային Կենտրոնական Ասիայում Ղազախստանն աչքի ընկավ իր պատրաստակամությամբ՝ ինտեգրվելու տարածաշրջանային և միջազգային մի շարք ծրագրերի: Մի բան, որը չի կարելի ասել Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի շատ երկրների մասին: Եթե հետխորհրդային որոշ երկրներ միջազգային հարաբերություններում ընտրում էին կամ-կամի տարբերակը, ապա Ղազախստանը որդեգրեց **բազմավեկտոր արտաքին քաղաքականության հայեցակարգը,** որով հնարավորություն էր ստանում հավասարակշռելու մարտահրավերների բոլոր վեկտորները. ազգային-ղազախական, ռուսական, չինական, համաթյուրքական, իսլամական և արևմտյան:

Ազգաշինական գործընթացները և դրա երկու բաղադրիչները՝ էթնիկ-ազգային և քաղաքացիական-հետխորհրդային, Ղազախստանում ուղիղ կապի մեջ են նաև

երկրի արտաքին քաղաքական վեկտորի հետ: Փորձ է արվում հավասարակշռելու թյուրքական և մուսուլմանական վեկտորները Ռուսաստանի, Չինաստանի և Թուրքիայի աշխարհաքաղաքական շահերին: Զգուշանալու համար արտաքին իսլամի բացասական դրսևորումներից ընտրախավը որդեգրում է **«արտաքին իսլամի զսպման կամ վտանգազերծման քաղաքականություն»:** Այն, միտված լինելով հավասարակշռելու իսլամի արտաքին և ներքին վեկտորները, գտնվում էր փոխադարձ հարաբերությունների մեջ ազգաշինության էթնիկ-ազգային բաղադրիչի հետ: Այս բաղադրիչի մյուս շերտը՝ թյուրքականը, նույնպես ենթարկվում է հավասարակշռման. անցում է կատարվում թյուրքականից դեպի ղազախականը և ապա մյուս կողմից՝ թյուրքականությունից և ղազախականից դեպի համամարդկայինը:

Ե. Արտաքին աշխարհի հետ հարաբերությունները հստակեցնելուն զուգընթաց Նազարբաևը երկրում սկսեց հասարակական, կրթական, մշակութային և քաղաքական վերակազմակերպումների մի համալիր ծրագիր: Հավատարիմ մնալով ազգաշինության քաղաքացիական սկզբունքին՝ Նազարբաևի վարչակարգը ստեղծում է միջէթնիկ հարաբերությունները կարգավորող քաղաքական և մշակութային մեխանիզմներ, որոնք արդյունավորվեցին 1995 թ. **«Ղազախստանի Ժողովուրդների Ասամբլեայի»** ստեղծմամբ: Ներդնելու համար համաղազախստանյան ինքնության գաղափարը որոշում կայացվեց «Ղազախստանի Ժողովուրդների Ասամբլեան» վերանվանվել **«Ղազախստանի Ժողովրդի Ասամբլեա»:** Իրավահավասար «ղազախստանցիների» գաղափարը ամրագրելու նպատակով երկրի գլխավոր փաստաթղթում հստակեցվեցին Ղազախստանում ապրող այլ էթնիկ խմբերի իրավունքները: Իրավական ամրագրմանը զուգորդվեց նաև զգայականը. պետական խորհրդանիշերը համալրվեցին նաև քաղաքացիական խորհրդանիշերով: Այսպիսով ազգաշինության էթնիկ-ազգային և քաղաքացիական սկզբունքով Ղազախստանը փորձում է աշխարհին ներկայանալ իբրև տարբեր ազգերի, կրոնական խմբերի և անհատների իրավահավասար և համերաշխ ամբողջություն, որտեղ այնուամենայնիվ ղազախները **«առաջինն են հավասարների մեջ»**:

Զ. Առանձնակի ուշադրության է արժանի երկրի լեզվաքաղաքականությունը, առանց որի անհնար է պատկերացնել հետխորհրդային Ղազախստանի ազգաշինությունը: Այն քաղաքակրթական ինքնահայեցողության մի օրինակ է, որը ներառում է անցյալի բարդույթների և մարտահրավերների հաղթահարման կամք: Նազարբայան վարչակարգն այն սահմանում է իբրև **եռալեզվության քաղաքականություն:** Ընդսմին ընդունվում է սեփական լեզվի վտանգված լինելը և քայլեր են ձեռնարկվում փրկելու այն՝ որդեգրելով ռուսերենի նկատմամբ հավասարակշիռ քաղաքականություն: Միաժամանակ աննախընթաց տարածվում է արդի միջազգային լեզուն՝ անգլերենը: Այս ճանապարհով, մի կողմից, ընդգծվում են ընտրախավի էթնիկական-ազգային հավակնությունները,

մյուս կողմից՝ ռուսական ազդեցության հավասարակշռության կարևորությունը, երրորդ կողմից՝ բազմավեկտոր աշխարհին մասնակցելու պատրաստակամությունը:

Է. Պատմական միտքը քաղաքակրթական տեսակի ինքնահայեցողության առավել կարևոր ձևերից է: Սակայն պատմական հանգամանքների բերմամբ ղազախների շրջանում վերջինս աչքի չի ընկել ներունակությամբ և բազմազանությամբ: Հիմնական պատճառը, ինչպես քանիցս առիթ ենք ունեցել հատկանշելու, նրանց ազգային ինքնագիտակցության անբավարար մակարդակն էր: Նորանկախ Ղազախստանում փորձեր են արվում վերիմաստավորելու երկրի պատմական հեռանկարը: Շեշտը դրվում էր անցյալի հերոսական դրվագների և «անանց» արժեքների վրա, որոնք խաթարվել էին ցարական և խորհրդային ժամանակաշրջանում: Միևնույն ժամանակ խոսվում էր ղազախների պատմական առաջընթացի մասին՝ ձեռք բերված զրկանքների և կորուստների ճանապարհով: Փառաբանվում էր ինքնիշխան ներկան և ապագան:

Ը. Հետխորհրդային Ղազախստանի ազգաշինության պատմության ամենավառ դրվագը թերևս նոր մայրաքաղաքի իրողությունն է: Այն զուտ քաղաքաշինության արդի դրսևորում չէ, այլև հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կերպափոխումներին միտված ցուցիչ: Մայրաքաղաքի տեղափոխման որոշման հիմքում գործող իշխանությունը տեսնում էր նոր սկզբի հնարավորություն: Աստանան ազգաշինության այն սկզբնական տարածքն է, որտեղ պետք է սահմանվեն «ղազախ» հասկացության տարբեր ենթաշերտերը: Նազարբաևի վարչակազմի համար Աստանան ոչ միայն արդի աշխարհի հետ հարաբերվելու միջնորդ է, այլև մի տարածք, որտեղ **Ղազախստանը ներկայացվում է ավելի «ղազախական»** և ազատ՝ ինքնութենական այլ ազդեցություններից: Դա կատարվում է ի հաշիվ նորաստեղծ կրթական, էթնիկական, լեզվական և նշանային ոլորտների, որտեղ ազգայինը համադրվում է **բազմամշակութայնությանը**: Այսպիսով, Աստանան իր լայն հնարավորություններով սերտորեն կապված է Ղազախստանի ամենատարբեր տեղական և համաշխարհային նախագծերին: Այն ղազախական անցյալը, ներկան և ապագան իրար կապող մի հանգույց է, որի **քաղաքակրթական հեռանկարը** ակնհայտ է դառնում այլ օրինակների պատմահամեմատական լուսաբանման համապատկերում:

Միով բանիվ՝ արդի Ղազախստանում ընթանում է ազգային ինքնության նոր հարացույցի մշակման և ներդրման գործընթաց: Այն բարդ է ու բազմաչափ և պարառում է ազգային կյանքի բազում միջավայրեր՝ ինչպես ներհանրութային, այնպես էլ արտաքին. լեզու, ազգային պատումներ, կրթական համալիր, խորհրդանշաններ, կրոնական ինքնագիտակցություն, ներէթնիկ հարաբերություններ, պատմագրություն: Ձևակերպված իբրև իմացաբանական հղացքներ՝ դրանք ներկայանում են իբրև քաղաքակրթական մարտահրավերներ, որոնք պահանջում են հարիր պատասխաններ: Ղազախական

քաղաքական ընտրախավն աշխատում է հավասարակշռել մարտահրավերների բոլոր վեկտորները՝ ազգային-ղազախական, ռուսական, համաթյուրքական, չինական, արևմտյան: Արդյո՞ք կկարողանա նա լրջմիտ ձևով համադրել դրանք. պատմական պահը խիստ կարևոր է, զի դրանից է կախված ղազախների քաղաքակրթական հեռանկարը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. **Mkrtchyan N.,** Astana: A New Post-Soviet Text, International Journal of Humanities and Social Sciences, Vol. 3, No. 21, Special Issues-December 2013, pp. 229-237.
2. **Mkrtchyan N.,** The Notion of 'Kazakhness' Behind the Symbolic Nation-Building of Kazakhstan, CEU Political Science Journal, Vol. 9, No. 1-2, 2014, 16-38. **(Indexed in SCOPUS)**
3. **Mkrtchyan N.,** Nation Building Projects Through New Capitals: From St. Petersburg to Yerevan and Astana, Nationalities Papers: The Journal of Nationalism and Ethnicity, Volume 45, No. 3, 2017, pp. 485-498. **(Indexed in SCOPUS)**
4. **Mkrtchyan N.** New Language Policy of Kazakhstan: A Project of Kazakhization? Contemporary Eurasia VI (1), 2017, pp. 108-121.
5. **Մկրտչյան Ն.,** Ղազախստանի ազգաշինության մարտահրավերները, - Ժամանակակից Եվրասիա. Եվրասիական խաչմերուկներ. մոր մարտահրավերներ, ՀԱՏՈՐ II (2), 2013, էջեր 68-80.
6. **Մկրտչյան Ն.,** Թյուրքիզմի և Իսլամի մարտահրավերները հետխորհրդային Ղազախստանում, ՎԷՄ համահայկական հանդես Թ (ԺԵ) տարի, թիվ 4 (60), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2017, էջեր 157- 175
7. **Մկրտչյան Ն.,** Կերեյի Ջանիբեկից մինչև Նազարբաև, Արևելագիտության հարցեր (Գիտական հոդվածների պարբերական ժողովածու), N 13, 2017, էջեր, 362-388.

НАРЕК А. МКРТЧЯН

КАЗАХСТАН: ПРОЦЕССЫ ПОСТСОВЕТСКОЙ СОЦИАЛЬНОЙ ИННОВАЦИИ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история, международные отношения». Защита состоится 5 июня, 2018 году в 15:00 на заседании специализированного совета 006 «Всемирная история, международные отношения», действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

Резюме

Целью диссертации является анализ социальных инноваций, происходивщих в постсоветском Казахстане. При этом казахстанский проект рассматривается на фоне общих сдвигов, протекавших на всем постсоветском пространстве. Исследователи их типологически подразделяют на следующие четыре группы: западная (Прибалтика), славянская (Россия, Беларусь, Украина), закавказская (Армения, Грузия, Азербайджан) и центрально-азиатская (Казахстан, Киргизия, Узбекистан, Туркменистан, Таджикистан). Нас интересует центральная Азия: вопреки общих черт, каждая страна здесь имела свои ярко выраженные особенности социальной инновации. Это более чем справедливо в случае Казахстана - страны с огромными природными ресурсами, пестрым национальным составом, пережитками клановой организации и сознания.

Именно в этом контексте в диссертации освещены проблемы образования новой этнической и гражданской идентичности казахов. После провозглашения независимости (16 декабря 1991 г.), новоиспеченный президент Нурсултан Назарбаев и его окружение приступили к осуществлению этого амбициозного проекта. Они использовали в первую очередь ресурсы национальной памяти о справедливом обществе и политической власти. На этой основе была построена вертикаль авторитарной власти, окутанной современными идеями демократии и общего блага. Казахская идентичность в диссертации рассматривается на протяжении всей истории: периоды кочевых ханств, имперского (царского) господства, советского режима и постсоветской независимости. Детально освещается постсоветский период, когда, лавируя между российским, исламским, китайским, западным, тюркским цивилизационными вызовами, Казахстан пытался найти свой путь интеграции в современный мир. Этот цивилизационный проект предполагал целенаправленную креацию во всех сферах социальной жизни - образование и язык, наука и искусство, экономика и политический строй, религия и межнациональные отношения, социальная психология и международные отношения. Особое внимание уделено градостроительству на примере новой столицы, Астаны, как семиотической среды организации нового казахского идентитета. Этот опыт освещен на параллелях «архитектурных инноваций» Российской империи (Петербург), Турецкой республики (Анкара), Бразилии (Бразилиа) и Советской Армении (Ереван). Для многопланого охвата темы, использованы как разнородные первоисточники, так и исследования. Среди

первоисточников следует выделить архивные материалы, статистические данные, данные социологических опросов, президентские декреты, официальные документы, конституции Республики Казахстан, футуристические программы (Казахстан «2030» и «2050»), и др. Использованная научная литература касается различных аспектов исследуемой темы, начиная с теоретических изысканий, кончая конкретными разработками. В результате их сочетания, тема диссертации обрела междисциплинарный характер. Логика исследования продиктовала структуру диссертации. Она представляет следующую картину: Введение, Глава 1: «Исторический обзор: от Керея и Жанибека до Назарбаева», Глава 2: «Казахстан: на пути к национальной идентичности», Глава 3: «Территориально-архитектурная парадигма постсоветского Казахстана: Астана», Заключение, Приложения. Основные результаты исследования можно сформулировать в следующих пунктах:

- Современная казахская парадигма нации и государства является результатом многомерных ответов на цивилизационные вызовы истории – патриархальное ханство, имперский (царский) диктат, советский безликий интернационализм, постсоветская независимость.
- Современный казахский идентитет – процесс самоорганизации нации в различных сферах социального общежития: образование, язык, наука, искусство, религия, государственное строительство, межэтнические и международные отношения.
- Этнические и гражданские проекты государственного строительства Казахстана уникальны в отношении мультикультурализма, социального баланса и политической стабильности. Они содержат энергию противостоять крайним проявлениям исламистского и националистического радикализма.
- Рационализм социотворческих проектов дает возможность преодолеть веками укоренившиеся клановые структуры и (что важнее) клановое сознание. Цель – создать условия для формирования гражданского общества с его системой ценностей.
- Внутриполитические сдвиги вполне соответствуют внешней политике Казахстана: режим Назарбаева выработал сбалансированные отношения с «главными игроками» региона: Россия, Китай, США, Евросоюз, Индия, Иран, Турция. Иными словами, «Казахстан открыт для Запада и Востока».
- Визуально-семиотический код постсоветских преобразований воплощен в новой столице Астане. Она призвана соединить прошлое Казахстана с будущим в утопическом пространстве архитектуры, искусства и политической пропаганды.

Диссертационное исследование может стать вкладом в исследовании постсоветской трансформаций в странах Центральной Азии. Оно может внести существенные коррекции в понимании проблем региона, где сталкиваются силовые, культурные и религиозные векторы Запада и Востока. Его результаты можно использовать как в вузовских (общих и специальных) курсах, так и академических исследованиях.

NAREK A MKRTCHYAN

KAZAKHSTAN: THE POST-SOVIET SOCIAL INNOVATION PROCESSES

The dissertation is submitted for the Academic Degree of Doctor of Philosophy in the field of "World History, International Relations" 07.00.02. The defense of the dissertation will take place on June 5, 2018 at 15:00 PM at the meeting of specialized council 006 "World History, International Relations" to be held at the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of Armenia, Yerevan 0019, Marshal Baghramyan av., 24/4.

Summary

This Ph.D. dissertation studies the post-Soviet social innovations in Kazakhstan. The nation and state building in post-Soviet space has been shaped in different paths, e.g., Western, Slavic, Transcaucasian and Central Asian. The study focuses on the Central Asian paradigm with particular focus on Kazakhstan. After the collapse of the Soviet Union, many Central Asian leaders embraced the nation-building notion as an innovative approach to shaping their respective states. Former communist leaders relied upon the traditional discourse of national identity to grow public consent thereby legitimizing regime options with strong patrimonial foundations. For Kazakhstan, the issue of nation-building has been particularly sensitive and distinctive in the sense of the congruous coexistence of different ethnic groups within the population. President Nazarbayev came to power with an ambitious nation building agenda, which contained components akin to patrimonial use of authority, but laden with policies geared to ethnicizing and civic cultivation.

To have a more comprehensive idea of modern identity challenges in Kazakhstan the study provides a brief analysis of Kazakh history by focusing on the periods of Khanate, Tsarist Russian, Soviet regime, and post-Soviet independence. Following the proclamation of independence on 16 December 1991, the former communist leader of Soviet Kazakhstan, Nursultan Nazarbayev was confirmed to the status of national leader of the independent nation-state of Kazakhstan. The research describes the mechanisms through which the post-Soviet system of Kazakhstan adopted a program of nation-building and succeeded in establishing a stable political system. The study argues that Nazarbayev's nation-building agenda aimed at departing from the influences of Russian and Islamic identities in an attempt to construct a relatively new national identity. The Nazarbayev's nation-building policies enveloped elements of language, identity and ethnicity within a strong program of public administration. This path of development would curtail or eliminate closed relations among tribes, clans and kinships within the larger context of socialization and identity construction in the longer term.

Another key concept tackled in this dissertation deals with the relocation of the state capital from Soviet-made Almaty to Astana. Through this manifestation of the new state, the government was determined to create a new sense of national identity not by visually transforming the architectural setting of the existing capital, but by installing a totally new city as the capital with new ideological content and configuration. The

redefinition of urban environments through national and civic symbols aims to raise the ethnic and civic consciousness of the people. To test the role of capital cities in nation building, the study examines the case of Astana in comparison with the experiences of Russia, Turkey, Brazil, and Armenia.

The research methodology is qualitative that uses both primary and secondary data in a convergent design. The study is grounded on an interdisciplinary theoretical framework with concepts from civilization studies, ethnography, political science and geopolitics, as well as cultural and religious studies. In-depth content analysis involved archival materials, official documents, such as Kazakhstan "2030" and "2050", the Constitution of the Republic of Kazakhstan, and Presidential decrees and speeches. Additionally, expert interviews were conducted in Astana, Kazakhstan and analyzed to add depth of content to the dissertation. The structure of the dissertation is as follows: Introduction; Chapter 1: Historical Overview: From Kerei and Janibek to Nazarbayev; Chapter 2: "Kazakhstan: On the Way to National Identity"; Chapter 3: The Territorial-Architectural Paradigm of Post Soviet Kazakhstan: Astana; Conclusion; and Appendices.The research concludes with the claim that Kazakhstan's social innovations have resulted in the following achievements:

- The Kazakh paradigm of nation and state-building is the result of multidimensional responses to the civilizational challenges of Khanate, Tsarist, Soviet and post-Soviet history.
- The process of people's self-identification in modern Kazakhstan is intermediated not by sources of authoritarianism, i.e., tribal and clan relations, but by national and civic spaces created in the spheres of education, religion, ethnic management, urban designing, symbolism, etc.
- Ethnic and civic projects of the state building of Kazakhstan are unique in terms multiculturalism, social balance and political stability. They tend to resist the extreme manifestations of Islamic and nationalistic radicalism.
- The rationalism of social projects makes it possible to overcome centuries old clan structures and (more importantly) clan consciousness. The goal is to create conditions for the formation of a civic society with its value system.
- Kazakhstan's domestic policies are consistent with the foreign policy: The government has developed balanced relationships with the "main players" of the region: Russia, China, the United States, the European Union, India, Iran, and Turkey. In other words, "Kazakhstan is open to the West and the East."
- The visual-semiotic code of post-Soviet transformations is embodied in the content of Astana. It is designed to connect the past of Kazakhstan with the future in the utopian space of architecture, art and political propaganda.

The dissertation will make a meaningful contribution to the study of post-Soviet transformation in the countries of Central Asia and also will fill the existing gap in studies of the history of transitions of post-soviet states. The results of this research can be used both in university (general and special) courses, and in academic studies.